



ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԱՆՈՒՇԱԻԱՆ ՏԷՐ-ՂԵԻՈՆ ԴԵԱՆ

(Նրա 25ամեակի առիթով)

1. Արուեստագէտը .

Հայ նորագոյն կոմպոզիտորների շարքում կայ մի գեղարուեստագէտ, համակրելի մի արտիստ, որ իր երաժշտական կտաւներով առանձնայատուկ էջ է գրաւում հայ երաժշտութեան պատմութեան մէջ: Դա Անուշաւան Տէր-Ղեւոնդեանն է, որ այսօր կանգնել է իր երաժշտական — հասարակական գործունէութեան 25-ամեակի շէմքին:

25-ամեակ: Դա երաժշտական որոնումների, ձեւակերպումների եւ վերելքի մի ամբողջ ժամանակաշրջան է, որի ընթացքում արուեստագէտն-ամբողջապէս ծառայել է երաժշտական արուեստին: Կարգացէք նրա կեանքի պատմութիւնը: Թերթեցէք նրա ստեղծագործական աշխատանքի հիմնական բնորոշ էջերը եւ դուք այնտեղ կը տեսնէք մի նպատակ, մի ձգտում, մի կրակ — հայ երաժշտութեան զարգացումը եւ հայ ժողովրդի գեղարուեստական յառաջագիմութիւնը: Ահա այն իդէալը, որ ընդգրկել է նա ամբողջ 25 երկար եւ ձիգ տարիներ: Այդ գծով էլ քայլել է նա անվկանդ, աննկուն կամքով, միշտ հաւատարիմ իր գրօշին, իր սիրած, փայփայած դադափարին: Նա երբեք չի դաւաճանել իր գրօշին: Դա արդէն իսկական արուեստագէտի բնորոշ եւ առանձնայատուկ գիծ է: Եւ հաւատարիմ իր իդէալին՝ նա վրձինն է մէկը միւսից գեղեցիկ երաժշտական կտաւներ, քանդակել է թէ՛ վոկալ եւ թէ՛ ինստրիմենտայ երկեր: Նրա վրձինած մեծ կտաւները — «Անդա» օպերան, «Աղքատար» սիմֆոնիական սյուիթը, «Շիրակի էսկիզները» եւ «Փարաւան» սիմֆոնիկ պատկերը — իրենց հիւսուածքով եւ

կառուցուածքով, իրենց ստիլով եւ երանգներով, անկասկած ուշադրաւ երեւոյթներ են մեր երաժշտական արուեստի մէջ: Էլ չենք նշում նրա լիրիկական, քնարական եւ ժողովրդական մօտիւնները, որոնք նոյնպէս ընդգծում են նրա երաժշտական կարողութիւնը: Երաժշտական այդ բազմերանգ կտորներով նա զարկ է տուել հայ երաժշտութեան զարգացմանը, հարստացրել է հայ երաժշտական աղբատիկ դրականութիւնը: Դա ինքնին կուլտուրական խոշոր մի աշխատանք է:

2. Երաժշտական դաստիարակութիւնը .

Ի՞նչ միջավայրի ծնունդ է Ան. Տէր-Ղեւոնդեանը, երաժշտական ո՞ր հնոցում նա կոմպոզիտոր է եւ դարբնւում, հասարակական ի՞նչ ուշադրաւ աշխատանքներ կատարում: Հարցեր, որոնց լուսարանութեամբ միայն հնարաւոր է պարզել նրա ամբողջական պատկերը:

Թիֆլիսի երաժշտական դպրոցը եւ Պետերբուրգի կոնսերվատօրիան — ահա երաժշտական այն հնոցները, որտեղ նա ուսանում է եւ ձեւակերպւում: Թիֆլիսում սովորում է նա խոշոր գեղարուեստագէտ Միքայէլ Գնէսինի մօտ, որը ո՛չ միայն վճռական ազդեցութիւն է աւելում իր սանի վրայ, այլ եւ արմատապէս փոխում նրա երաժշտական աշխարհահայեացքը: Սակայն նրա երաժշտական բնորոշ առանձնայատկութիւններն էլ աւելի զարգանում եւ ստանում են ուրոյն ձեւ եւ երանդ Պետերբուրգի կոնսերվատօրիայում: Գեղարուեստական այդ աշխարհում նա ուսանում է 1909 — 1915 թուականը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Պետերբուրգի երաժշտական կոնսերվատօրիայում

դասաւանդում էին պրոֆէսէօրներ Կալաֆարտի, Լեադով, Չերեպնին եւ Գլուզանով: Ահա տաղանդաւոր այդ արուեստագէտների մօտ Տէր-Ղեւոնդեանը զինուում է երաժշտական լուրջ կուլտուրայով:

3. Հասարակական գործունէութիւնը.

1917 թուականին Տէր-Ղեւոնդեանը ազատ-գեղարուեստագէտի կոչումով վերադառնում է Թիֆլիս: Այդ օրուանից էլ սկսում է նրա երաժշտական - հասարակական գործունէութիւնը: Առաջին հերթին հրաւիրւում է նա Թիֆլիսի պետական կօնսերվատօրիան որպէս թէօրէտիկական եւ բարձր մասնագիտական առարկաների ուսուցիչ: Այդ երաժշտանոցում նա մնում է մինչեւ 1924 թուականը եւ դաստիարակում երաժշտասէր մի ամբողջ սերունդ:

1924 թիւն նա էլ աւելի ընդարձակում է իր երաժշտական - գեղարուեստական գործունէութեան շրջանակը: Նոյն թիւն նա Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերութեան կողմից, երաժշտագէտ Սպիրիդոն Մելիքեանի հետ ուղարկւում է Ծիրակի շրջանը: Այնտեղ նա Փօնօգրաֆի միջոցով հաւաքում է հայ ժողովրդական երգեր: Հաւաքում է մօտ 200 երգ, որոնք հրատարակւում են Հայ երաժշտ. Ընկերութեան կողմից, Սպ. Մելիքեանի խմբագրութեամբ: Ծիրակի հայ ժողովրդական երաժշտութեան թանկագին նմուշներից շատերը Տէր-Ղեւոնդեանն ենթարկում է գեղարուեստական մշակման:

Սակայն նա երաժշտական այդ աշխատանքով էլ չի սահմանափակում իր հատարական գործունէութիւնը: Այնուհետեւ նա ակտիւ եւ եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս Թիֆլիսի Հայարտան (Հայ Արուեստի Տան) երաժշտական սեկցիայում: Այդտեղ նա առաջին անգամ հիմք է դնում երաժշտական ստուդիային:

Այդ ստուդիայի շուրջ համախմբւում են Թիֆլիսում ապրող մեր կուլտուրական երաժշտագէտները եւ ստուդիան դնում են հաստատուն հիմքերի վրայ: Հիմնում են սիմֆօնիկ օրկէստր, կազմում կրկեցիկ քառաձայն խումբ: Եւ ահա Թիֆլիսում սկսում է երաժշտական - կուլտուրական մի նոր շարժում: Տրւում են մի

շարք գեղարուեստական համերգներ: Թիֆլիսի հայ երաժշտութեան պատմութեան մէջ այդ համերգներն ուշադրաւ երեւոյթներ են, որոնց ետեւում տեսնում ենք լաւագոյն երաժշտագէտներ Ռումանոս Մելիքեանի, Ալ. Սպենդիարեանի, Արմէն Տիգրանեանի, Սարգիս Բարխուդարեանի եւ Ան. Տէր-Ղեւոնդեանի պայծառ եւ ցայտուն դէմքերը:

1926 թուականից Ան. Տէր-Ղեւոնդեանի կեանքի պատմութեան համար բացւում է մի նոր էջ: Այդ թուականից նա նշանակւում է Երեւանի պետական կօնսերվատօրիայի ղիրեկտօր: Այդ շրջանում էլ նրա ջանքերով երաժշտանոցում սկիզբ է առնում օպերայի դասարանը, որ նախագիտւն է Երեւանի պետական Օպերայի: Այդ օրուանից ահա նա գործում է եւ ստեղծագործում հայրենի հողի վրայ: 1935 թ. նա նշանակւում է Աղրբեջանի պետական երաժշտանոցի վարիչ, որի հետ զուգընթաց առաջ է տանում իր ստեղծագործական - կուլտուրական գործունէութիւնը:

4. Ժամանակաշրջանի երաժշտութեան պատկերը.

Ան. Տէր-Ղեւոնդեանի երաժշտական - հասարակական արժէքն աւելի ընդորշ եւ ցայտուն դոյններով դժադրելու համար սեղմ գծերով լուսարանենք, թէ ի՞նչ էր ներկայացնում այն պատմաշրջանը, երբ նա հրապարակ է գալիս որպէս երաժիշտ - հեղինակ, որպէս ստեղծագործող:

90-ական թուական: Ահա այն ժամանակաշրջանը, ուր հրապարակ է գալիս երաժշտութեան կրակը սրտին Պետերբուրգի կօնսերվատօրիան դեռ նոր աւարտած երիտասարդ արուեստագէտը: Դա մեր գրականութեան պատմութեան մէջ փայլուն եւ ուշադրաւ մի շրջան է: Այդ պատմաշրջանում ուսանահայ նորագոյն բանաստեղծութիւնը, վիպագրութիւնը եւ թանրագրութիւնը նորանոր նուաճումներ են անում: Դեռ ութսունական թուականների երկրորդ կիսում վերածնւում է մեր բանաստեղծութիւնը բոլորովին նոր եւ ուրոյն կերպարանքով: Առաջ է գալիս մի ամբողջ երեւոյթ: Դա նոր բանաստեղծների շրջանն է: Թուսահայ բանաստեղծու-

թեան հորիզոնի վրայ հետզհետե՛ փայլում են՝ Յովհաննէս Յովհաննիսեան, Ալեքսանդր Ծա-
տուրեան, Յովհաննէս Թումանեան, Աւետիք
Իսահակեան, Լեւոն Մանուէլեան, Վահան Մի-
րաքեան: Այդ շրջանում առանձին փայլ է ստա-
նում նաեւ ուսանչայ վիպագրութիւնը: Նար-
Դոս, Շիրվանդադէ, Վրթանէս Փափաղեան եւ
ուրիշներ նոր հունի մէջ են դնում ուսանչայ
նորագոյն վիպագրութիւնը: Այդ պատմաշըր-
ջանում հետզհետե՛ գծում է իր ուղին հայ նկար-
չութիւնը. օրէց օր զարգանում է եւ ձեւակերպ-
ւում նկարիչների նոր սերունդը — Վարդգէս
Սուրէնեան, Գէորգ Բաշինջաղեան, Եղիշէ Թա-
դէոսեան, Տէր-Աստուածատրեան, Ստ. Ներ-
սիսեան, Ստ. Աղաջանեան, Մար. Սարեան
դառնում են նորագոյն նկարչութեան լուսադոյն
դրօշակակիրները: Ապա ի՞նչ էր ներկայացնում
պատմաշրջանի հայ երաժշտութիւնը: Պատկերը
մոռյալ էր: Չունէինք երաժշտասէր հասարակու-
թիւն: Չունէինք երաժշտական նպաստաւոր
հանգամանքներ: Երաժշտական գիտակցութեան
զարթման շրջանն էր դա: Մեր հազուագիւտ
եւ տաղանդաւոր երաժշտագէտները դեռ նոր,
նոր էին ճանապարհ հարթում: Պայքարում էին
նրանք երաժշտական տիրոջ խաւարի, անկույ-
տուրականութեան դէմ: Դա այն ժամանակա-
շրջանն էր, երբ հայ երգի մոլեռանդ պրօպա-
կանդիստ Կարա — Մուրզան շրջելով հայարնակ
քաղաքները, ժողովրդական լայն մասսաների
մէջ տալածում էր դեղջկական — ժողովրդական
երգերն ու բազմաձայն երգեցողութիւնը: Այդ
գծով էլ նա հանդիսացաւ առաջին դրօշակակի-
րը: Ո՞վ կարող է ժխտել Կարա — Մուրզայի
կատարած այդ խոշոր դերը:

Ո՞վ կարող է բացասել նոյն շրջանում Մա-
կար Եկմալեանի հայ հոգեւոր երաժշտութեան
մշակման եւ ներդաշնակման գծով կատարած
դերը: Նրա ներդաշնակած Պատարագը «հոգե-
ւոր երաժշտական կուլտուրայի լուսադոյն ար-
ձանն է, որը լուծում է արեւելեան եղանակնե-
րի վերաբերեալ ներդաշնական ամենաբարդ
խնդիրները»:

Հայ երաժշտութեան պատմութիւնն արձա-
նադրող ո՞ր անաչառ պատմաբանը կարող է
չյիշատակել Նիկողայոս Տիգրանեանի կատա-

րած խոշոր դերը, որ զարկ տուեց դաշնամու-
րային գրականութեան: Եւ վերջապէս ո՞վ կա-
րող է մոռանալ Կոմիտասի աննման դերը, նրա
հոյակապ արուեստը, որ իր ներդաշնակած հա-
րազատ հայ ժողովրդական երգերով եւ իր
սարքած համերգներով առանձնայատուկ տեղ
է զբաւում հայ երաժշտութեան պատմութեան
մէջ: Նոյն շրջանում էլ զարբնում է մի նոր ե-
րաժիշտ: Դա տաղանդաւոր կոմպոզիտոր Ալեք-
սանդր Սպենդիարեանն է, «Ալմաստ»ի յայտնի
հեղինակը:

Ահա այսպիսի պատկեր էր ներկայացնում
հայ երաժշտութիւնը, երբ հանդէս է գալիս ե-
րաժշտութեան դիրքերում Ան. Տէր-Ղեւոնդ-
եանը: Ասպարէզ է գալիս նա հետզհետե՛ ձեւա-
կերպուող երիտասարդ տաղանդաւոր երա-
ժշտագէտների — Ռոմանոս Միլիֆեանի, Ար-
մէն Տիգրանեանի, Սարգիս Բալիստղարեանի,
Սպ. Մելիֆեանի, Գուրգէն Միրզոյեանի եւ Ա-
զատ Մանուկեանի հետ: Ասպարէզ է գալիս նա
երաժշտական այն նոր դէմքերի հետ, որոնք
այսօր մեր նորագոյն երաժշտութեան պար-
ձանքն են կազմում:

5. Անուշաւան Տէր-Ղեւոնդեանի երաժշտա-
կան կտաւները.

Ի՞նչ է կերտել, երաժշտական ի՞նչպիսի
կտաւներ է վրձինել Տէր-Ղեւոնդեանն իր 25-
ամեայ երաժշտական գործունէութեան ընթաց-
քով:

Նրա ստեղծագործական մօտիւնները կարելի
է բաժանել երկու հիմնական շրջանի — առա-
ջին՝ ինքնուրոյն որոնումների եւ երկրորդ՝
ձեւակերպման, խորացման:

Արուեստագէտի առաջին, հիմնական շըր-
ջանը պիտի համարել ուսանողական ժամանա-
կաշրջանը: Դեռ Պետերբուրգի կօսներվատօ-
րիայի ուսանող՝ նա գրում է մի շարք վօկալ
եւ խմբական աշխատութիւններ, որոնք ո՛չ մի-
այն ուշադրութեան են արժանանում, այլ եւ
հրատարակում են «Բեսսել եւ Ընկերութիւն»
երաժշտական հրատարակչութեան ընկերու-
թեան կողմից: Այդ շրջանում նա ստեղծագոր-
ծում է ուսական չկոլայի խոր ազդեցութեան
ներքոյ: Գլխաւորապէս կրում է Ռիմսկի — Կոր-
սակովի, Գլազունովի, Մուսորգսկու, մասամբ

էլ Վազնէրի եւ Սկրեարինի ազդեցութիւնները: Այդ շրջանում է, որ նա հետզհետէ վրձինում է «Շէյխ Սաֆօ», «Առ սիրունի», «Ճախարակին երգը», «Ուտենի», «Գեղջկուհու սէրը»: Հետաքրքիր է, որ նա այդ շրջանում յորինում է ժողովրդական երաժշտութեան ոճով մեներգներ, դուէտներ ու խմբերգներ: Երաժշտական այդ կտաւները բնորոշ են որպէս ինքնուրոյն սրտնումների արտայայտութիւններ: Այդ երգերով արուեստագէտը նշում է իր ստեղծագործական ուղիները:

Արուեստագէտի ստեղծագործութեան երկրորդ շրջանն աւելի հարուստ է եւ աւելի բազմերանգ: Այդ ժամանակաշրջանում նա հետզհետէ խորանալով իր արուեստի մէջ, նոր երանդներ է տալիս իր ստեղծագործութեան եւ նկարում երաժշտական խոշոր կտաւներ — «Սեղա», «Աղթամար», «Փարւանա», «Շիրակի էսկիզներ»:

Վերջին շրջանում նա էլ աւելի խորանում է իր արուեստի էութեան մէջ: Ահա թէ ինչու նոր դոյն եւ գեղարուեստականութիւն են ստանում նրա վերջին երգերը — «Ջան Աղբրէջան», «Արտերը ծլել են» եւայլն, որոնք այսօր լայն ժողովրդականութիւն են ստացել եւ հնչում են ժողովրդի շրթների վրայ: Առհասարակ Տէր-Ղեւոնդեանի բոլոր ստեղծագործութիւնները նրա համար մի անուն են ստեղծել: Դա պիտի բացատրել նրանով, որ այդ կտաւներից շատերը վրձինուած են արուեստագէտի կարող շնչով: Այնտեղ դուք տեսնում էք տեկստի՝ բանաստեղծութեան հոգեբանական իմաստի՝ եւ երաժշտական բովանդակութեան սերտ ներդաշնակութիւն: Ահա թէ ինչու այդ երգերը հարազատ են, պատկերաւոր եւ իրենց շնչոտերով անկեղծ: Կայ աւելին: Երաժշտագէտը կարողացել է տալ դոյներ, կօնտրաստներ, հոգեկան յոյզերի հարազատ արտայայտութիւններ: Ահա թէ ինչու դուք ապրում էք նրա երազներով, յոյզերով,

նրա հոգու կրակով: Եւ երաժշտական այդ դիւթիչ հնչիւնների, երանդների եւ նկարների ախարհում գգում էք, որ փոխում է ձեր հոգին, ձեր սիրտը, ձեր միտքը: Զգում էք գեղարուեստական հաճոյք:

Էլ կանգ չենք առնում Տէր-Ղեւոնդեանի մանկավարժական ու կազմակերպչական գործունէութեան վրայ, էլ չենք նշում նրա մանկավարժական աշխատութիւնները — «Երաժշտութեան տարրական թէօրիան» եւ «Ձեռնարկ ակօրդների ուսումնասիրութեան» որոնք զնահատուել են թիֆլիսի պետական կօնսէրվատօրիայի գեղարուեստական խորհրդի կողմից եւ ընդունուել են որպէս ձեռնարկ երաժշտական դպրոցներում:

6. ԱՆ. Տէր-Ղեւոնդեանի դերը.

Քսանեւ հինգ տարիներ Տէր-Ղեւոնդեանն ստեղծագործել է եւ կերտել: Այդ ժամանակաշրջանում նա իր սիրտը, իր հոգին, իր լաւագոյն առանձնայատկութիւնները նուիրել է հայ ժողովրդի գեղարուեստական դաստիարակութեան գործին: Այդ երկարատեւ տարիների ընթացքում նա հայ երաժշտութեան զարգացման համար կատարել է անդնահատելի դեր:

Այսօր էլ նա լուռ ու մունջ, անվկանդ տուկունութեամբ, միշտ հաւատարիմ իր պարզած դրօշին, աշխատում է եւ ստեղծագործում:

Այժմ, երբ արուեստագէտը կանգնած է իր ստեղծագործութեան բեղմնաւոր շրջանում, իր երաժշտական գործունէութեան 25-ամեակի շէմքին, երբ Հայաստանի կառավարութիւնը նրա ճակատը պսակել է պրօֆէսօրի եւ վաստակաւոր արուեստագէտի կոչումներով, այսօր իւրաքանչիւր գեղարուեստասէրի, իւրաքանչիւր անաչառ եւ կուլտուրական թերթի բարոյական պարտականութիւնն է ընդգծել հայ երաժշտութեան բնագաւառում նրա կատարած գեղարուեստական — կուլտուրական դերը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ